

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ի ՀՌՈՄ

ԱՅՆ ՕՐԷՆ՝ երբ զուլումն եկաւ պատեց մեր աշխարհը՝ մենք առանց ցուպի, առանց մախաղի կտրեցինք ծով ու ցամաք, ապրեցանք մարդերու հետ որ ոչ մեր լեզուն եւ ոչ մեր ցաւն իմացան։ Անպատի այդ կեանքին մէջ սակայն այս տարի հոգեկան սփոփանք մ'եղաւ ուխտագնացութիւնը՝ Երուսաղէմէն վերջ Հոռոմ, ուր տեսայ եւ հաւատքով համբուրեցի գլխաւոր առաքեալներուն գերեզմանները, կաթողիկէ Եկեղեցւոյ գլխուն Ս. Աջը, եւ նախկին դարերու հաւածական քրիստոնեաներու նուիրագործած վայրերը՝ գետնադամբանները, որոնց բոլորի մասին իմ յիշողութիւնները պիտի պատմեմ ընթերցողիս, համառօտ կերպով։

Խաւաքական սահմանէն ինձ ուղեկից ունիմ ուրբանիացի գեղեցիկ՝ ու բարի երիտասարդ մը, ինձ պէս ուխտաւոր։ Ան իր ազգի պատմութեան լաւագոյն դէպքեր ու դէմքեր կը պարզէ, ես՝ իմ հայ ազգի. ու իմ համեստ պաշարէն կը հանեմ նաեւ այդ ուխտագնացութեան ի դէպ՝ մեր Մովսէս Խորենացի պատմահօր հանդիպելը Հոռոմի մէջ Ս. Պետրոսի եւ Ս. Պօղոսի գերեզմաններուն, եւ թէ ինչպէս Կիլիկիան շրջանին հայ ուխտաւորներու շարքին հետ կաթողիկոսներ անգամ գացած են հոն։

Եւ եթէ այս անգամ մինակ եմ, բայց ուխտած եմ իմ մոմը վառել, իմ խունկը ծխել հեռաւոր ու պանդուխտ եղբայրներու համար, երգելով հոգւոյս մէջէն միջնադարեան մեր քերթողներուն հետ։

«Պետրոս եւ Պօղոս քրիստոնէից պարծանք Մեծ է ձեր հանդէս այսօր ի հոռոմ քաղաք. ու վայրկեան առաջ կը բաղձամ հոն հասնիլ ու զըռմել « համբոյր ջերմ սիրոյ »

շնորհաբաշխ նշխարաց սրբոց առաքելոց» որպէս մեր կաթողիկոսները հին դարերուն կ'արտայայտուէին առ Ս. Քահանայապետներն գրած թուղթերուն մէջ՝ ինչպէս կ'աւանդէ պատմահայր Չամչեան։

Սեպտեմբերի անոյշ գիշեր է։ Մեր զբնացքը կը սուրայ դէպ ի Հոռոմ։ Ընթրիքի ժամուն իմ բարեկամը կը յարդարէ համեստ սեղան մը, կը խառնենք մեր ուտելիքները վայելելով միասին. նաեւ օղին՝ զոր չէ մոռցած ան։ Ընթրիքէն վերջ՝ վանականի ամփոփածութեամբ աջէն ձախ խաչեր հանելով՝ երկար կ'աղօթէ ընկերս դէպ ի աստղերը՝ որ կը պլպլան։ Կէս գիշեր է գրեթէ, երբ առաջին քունէն կ'արթնանք. բարեկամս կը պարպէ մնացորդ օղին. ու կը սկսինք ծոմ. լուսածագին՝ սուրբ քաղաքին մէջ սուրբ խորհուրդներով սկսելու մեր ուխտի առաջին օրը։

Երբ անգամ մ'ալ կ'արթնանք՝ արդէն հորիզոնին վրան է արեգակը. եւ ահա Հոռոմ։ Կայարանին մէջ ամբոյս մը կը վիտայ, ամէն լեզու, ամէն տարազ, ամէն հասակ։ Անոնք ալ մեզի պէս ուխտաւորներ են հեռու աշխարհներէ հոն թափած։ Եւ ամէն օր աւելի քան տասն հազար կը հասնին։

Բարեկամէս հրաժեշտ առնելով կ'երթամ Ս. Վլասի եկեղեցին՝ որուն կից կայ ազգային ուխտաւորներու յատուկ հոգեւորներ։ Եւ հոն կը մնամ շաբաթ մը։

Առաջին անգամ Ս. Պետրոսի տաճարը կ'այցելեմ։ Կ'ըսեն թէ համբաւը իրականութենէն վեր է, եւ սակայն աչքի առաջին պատրանքներէն վերջ մեծ եւ հսկայ կը գտնեմ հոն ամէն ինչ, ինչպէս պետնինեան սիւնազարդով բոլորակուած հրա-

պարակը, Ս. Պետրոս ալ կը հսկայանայ համեմատօրէն եւ կը վսեմանայ։

Մինչ պղնձէ մայր դուռը կը դիտեմ, աչքիս կը զարնուին հայատառ երկու բառ « Սբ. Գրիգոր » . ահա հոգեկան հանդիպում Լուսաւորչի զաւակներու այս հեռաւոր աշխարհին մէջ. եւ ո՛ր գիտէ քանի՛ դարերու միջադիր անջրպետով։ Ժամը տասնուկէսի մօտ է. ուխտաւոր գունդեր ու բանակներ է որ հետզհետէ կը հասնին գաւթին մէջ, կը խմբուին. ամբոյսը լուռ է. քահանաներ կը փսփսան, յանձնարարութիւններ մը կ'ընեն, եւ իսկոյն թափօր կը կազմուի դէպ ի սուրբ դռնէն ներս. առջեւը խաչակիր մը առնթրեակայ զոյգ մը ջահնկալներով. ահա ամբողջ հանդերձանքը կամ շուքը թափօրին։

Պահ մը կ'ամփոփուին ամէնքը ծնրադիր, կը համբուրեն սուրբ դրան քարերը ու ապաշխարողի դէմքերով կը յառաջեն։ Ու յանկարծ կը տեսնես զիրենք գետնատարած Սրբութիւն սրբոցի դիմաց։ Եպիսկոպոս մ'եւ քանի մը քահանայ բարձրաձայն աղօթք մը կը սկսին՝ որուն կը պատասխանէ ամբոյսը։ Ժխոր մը չէ այն, այլ սրտագին, հառաչական աղօթք՝ որ ալիքի, յորձանքի պէս կ'երթայ։ Ի զուրէ՛ ճիգս՝ միայնակ կենալ, միայնակ աղօթել իմ հայու լեզուով. եւ կ'աղօթեմ ամբոյսին հետ՝ որուն ձայները կը բարձրանան, շատերն յուզուած են, ուրիշներ կ'արտասուեն։ Խումբը սրտաշարժ երգերով կը յառաջէ խաչելութեան խորանը. մինչ արցունքոտ դէմքեր դեռ կը դանդաղին հոն. իրենց սիրտն ու վէրքեր ունին բանալիք Անոր առջև որ խորհրդականօրէն կը սփոփէ ու կ'օրհնէ։

Տիրամօր ոտքն է բազմութիւնը։ Ո՛րքան հայեցացներ թախանձագին, որ հեզօրէն կը փակուին ու կը բացուին սիրոյ եւ կարօտի յուզումներով։ Կը մեկնի ամբոյսը, եւ սակայն աչքիս կը զարնէ մենաւորիկ կին մը, Տիրամօր դէմ. աղբրս ունի, եւ առատ արցունք։ Կարծես մոռցած է թափօր, ամբոյս, հոն է, բազկատարած. ձեռակարկառ, հեծկլտանքով կ'աղօթէ ուժ-

գին... ո՞ր գիտէ ինչպիսի՛ ցաւեր ունի... կը ստիպուիմ հեռանալ։ Վկայարանին վրայ կ'աղօթենք. հոն են Առաքելապետին մասունքները։ Կ'իջնենք ստորեկրեայ մասին մէջ, ընդարձակ տեղ է. մօտէն կը համբուրենք պապ քարերը՝ որոնք կ'ամփոփեն զՅիսուս այնքան սիրող ջերմաջերմ Պետրոսի մասունքը։ Հոս քրիստոնէական նախկին դարերու արձաններ, քարեր, արձանագրութիւններ, հոն դամբաններ հին ու նոր՝ քահանայապետներու, ծիրանաւորներու. եւ դամբաններ բիւրեղ, կրանիթ, ոսկեպատ ու արծաթապատ, եւ փունջ փունջ անթառամ ծաղիկներ ու յաւերժալոյս կանթեղներ՝ պլպլացող մոմերու հետ։

Եւ ամէն խումբ կը կրկնէ ու կ'երեքկնէ իր քաւարար աղօթքները, մինչ այն ուրիշ խումբեր է որ կու գան, ուրիշ լեզու, ուրիշ տարազ, Ամերիկայէն սկսեալ մինչեւ Ուկրաինայի հեռաւոր անկիւններէն եւ Ափրիկէի հարաւային ծայրերէն ուխտաւորներ կան. ոչ մէկ աղաղակ, ոչ մէկ շփոթ, այլ ամփոփ դէմքեր, աղօթքի զրքեր ու վարդարաններ ի ձեռին՝ կը յառաջեն քիչ մը երագ... Ժամը մէկն է, կը թողում տաճարը, մինչ դեռ այդ ժամուն իսկ դեռ ուրիշներ կ'երթան ու կու գան խորանէ խորան, փութկոտ, բարեպաշտ զիրքով։ Եւ կը լսեմ եկեղեցւոյ խորերէն ամբոյսին երգը որ կ'ալէկոծի անթիւ զբմբէթներուն ներքեւ ու կը բեկբեկի։ Ահա խումբ մը որ աւարտած է իր ուխտական պարտականութիւնները. ու կը տեսնես բարի աչքեր հաւատքով լեցուն, որոնք գոհունակութիւնն ունին արդէն արժանացած ըլլալու սրբազան ներողութիւններուն, որոնց համար այնքան զոհողութիւն, այնքան ճամբայ կտրած էին։ Վըշտաբեկ հոգիս անոնց հետ կը ժպտի. չէ՞ որ վերջապէս եկած էինք մեր ուխտը կատարելու նոյն հաւատքով ու նոյն սիրով, ու գտանք զիրար նոյն մօր զաւակ, նոյն յոյսերով սփոփուած, հեռաւոր, անծանօթ, բայց նոյն հօտին ոչխարներ։

Արդէն ճաշածամ է։ Կը հեռանամ տա-

ճարէն, սակայն կարծես անծանօթ ուժ մը զիս ետ կը դարձնէ, ու ես ընդհատ ընդհատ կը դիտեմ այդ անհղ զանգուածն ու հրաշքի կերտուածը իր ամենափառ գիծերով, ու կ'ըմբռնէ հոգիս վերամբարձ թռիչք Պայրընի հանճարին որ իր անզուսպ հոգիէն պոռթկացած է այդ Պետրոսեան տաճարին վրայ գովեստներու խորաքանդակ մը, ուր բերթողը լոկ տաղաւար մը կը նկատէ անոր քով Անահտի մեհեանը, կը յիշէ աւերակները Եփեսոսի Արտեմիսի անապատացած փառքերուն, ու Ս. Սոփիան անգամ կը խոնարհի, կ'անշքանայ կարծես.

«Բայց դու կը մնաս միայն կամզուռ Տաճարներում, սեղաններում մէջ ձիւ ու մոր. Զուգեմալով ուրիշ ո՛չ մէկն հաւասար. Սուրբ, Զշմարիտ աստուածութեան Դո՛ւն ես միայն արժամաւոր... Ահեղութիւն, զօրութիւն, փառք, մեծութիւն, Գեղեցկութիւն՝ համախմբուած են յարկիդ տակ՝ Ուր ամաղարտ է պաշտամունքը կըրօնքի».

Վերադարձիս արդէն կ'երագեմ Ոստեան ճանապարհի համբաւաւոր ուխտավայրը, ուր կը հանչին ոսկրները միւս մեծ Առաքեալին՝ որ ինչպէս գործակից Պետրոսի՝ հիմ դնելով Հոռոմի քրիստոնէութեան և տիեզերական Մայր Եկեղեցւոյն, իր արիւնով, այսպէս անբաժան է անկէ մահէն վերջ նուիրագործելով յաւիտենական քաղաքը իր պաշտելի և խնկարոյր մասունքներով:

Հրատոչոր արեգակին տակ կը կտրեմ քաղաքը. ամբոխ մ'է խոնուած տրամուշիներուն մէջ. ուխտաւորներ են զրեթէ ամէնքը: Դուրս կ'ելլենք Հոռոմի պարիսպներէն դէպ ի հարաւ. և ահա մօտն ենք տաճարին որ ի սկզբան այնքան տպաւորութիւն չ'ըներ, բայց երբ կ'երթանք դէպ ի արեւմուտք՝ ուր նախագաւթն է, կը վսեմանայ ան. ճակատը կրակ առած կը բոցավառի. ոսկի խճանկարներ են Գառնին, որուն հանգչած բլրան ներքեւէն կը հոսի կենդանի ջուրը ծարաւի ոչխարներուն — խորհրդաւոր պատկեր Փրկչին եւ ուխտաւոր հաւատացեալներուն:

Կ'ամփոփուիմ բարեպաշտ խումբերուն ետեւը: Սրբազան դրան սեմն համբուրած՝ աղօթքի մրմունջով մը ներս կը մտնեմ: Ո՛հ, այդ ինչ վսեմութիւն, ինչ յատակ և փարեւի գեղեցկութիւն. հրաշափառ դահլիճ մը, կողմնակի երկկարգեան սիւներով որոնք վեր կը բռնեն ոսկեղրուագ ձեղունքը: Վերը կը շրջապատէ անթիւ բազմութիւն մը կիսաբաց պատուհաններու որոնց դեղնորակ ալապատներէն կը թափանցէ օծուն և անոյշ լոյս մը: Սրբութեան խորանին ամփոփ ու խնկարոյր մատրան մէջ սէր ու արցունք կը տեսնեմ, ու Աստուածամօր խորանին դիմաց — որ համակ զմբուխս է՝ ոռոս ցարերու նուէր — հազարու մէկ դէմքեր, վերամբարձ աչքեր՝ տեսիլքի կարօտ, հառաչաւորներ, թախանձողներ, լացող սրտեր ու աչքեր...: Այդ որքան հաւատք և այդքան այլազան ցեղերու մէջ. մէջերնին սեւեր ալ կան Ամերիկայէն ու խոր Եթովպիայէն:

Վերջապէս Վկայարանն եմ. գեղանի տետրասկեղ մը, նրբարուեստ, երկնամբարձ, ու պաղ քարերուն վրայ ծնրադիր, համբոյրս ու ճակատս կը մերձեցնեմ այն քարերուն որոնց ներսը կը հանգչին ուսկըրները Ս. Պօղոսի: Սարսուռ մը և ապա խոր յուզում մը կ'անցնի հոգիէս երբ կը խորհիմ թէ հոտ են յետին մնացորդները այդ առիւծին որ ամբողջ տիեզերքի արհաւիրքներուն դէմ մաքառեցաւ և արեւելքէն արեւմուտք ամբողջ աշխարհը լեցուց Գրիստոսի անունով և այդ պաշտելի անուան երկրպագուներով:

Խորհուրդներուս և յուզումներուս մէջ կարծես նախանձի բուռն զգացում մ'է որ կը տիրէ հոգւոյս: O felix Roma! Արդարեւ երջանիկ, որ Եկեղեցւոյ վէմն ու հիմն ունենալէ զատ, այդ ախոյեանն ալ կը կրէ իր ծոցը: Ինչ զարմանք թէ ան կեղրոն ըլլայ Եկեղեցւոյ, երբ հոն է տիեզերքի անհամեմատ պայծառ ջահերու զոյգը. և իրաւունք ունէր Ոսկերեքան զոչելու և իր սէրն ու զմայլանքն յայտնելու քանի որ ան իր մէջ ունէր երկու արեգակներ՝ տիեզերքին լուսատու:

Հայկական հինաւուրց աւանդութեան մ'արձագանգը սրտիս՝ կ'այցելեմ տաճարին կից պատմական վանքը՝ որ պաշտօնն ունի հսկելու գերեզմանին և փառաւորելու հեթանոսաց առաքեալը: Բայց ինձ կ'ըսեն թէ Ս. Պօղոսի գլխատման վայրն է՝ ուր դարեր առաջ հայ վանք մը գոյութիւն ունեցած է: Առիթէն կ'օգտուիմ այցելելու պատմական վայրը: Լոակեաց վանք մ'է այժմ Եռադրիւրի վրայ (= Tre fontane), որ երբեմն Սառնեան չռքեր անունը կը կրէր: Դժբախտաբար ո՛չ մէկ տեղեկութիւն կրնան տալ ինձ, միայն տապանաքար մը կը գտնեմ հայատառ և ուրիշ ոչինչ:

Հեռաւոր երկիրներէ խոնուող բազմութեան հետ կը շարունակեմ ուխտաւորի այցելութիւնս: Ահա Կոստանդիանոսի կերտած Լատերանեան տաճարը՝ որուն ճակտին դրոշմուած է. «Քաղաքին և աշխարհի եկեղեցիներու մայր և գլուխ»: Ս. Յովհաննէսներու՝ Մկրտչին և Աւետարանչին նուիրուած այդ տաճարը հին է և նոր, հուր և սուր տեսած, ինկած ու կանգուն: Կը տեսնեմ այցելութեանս պահուն բազմութիւն մը որ կ'ալեկոծի խորանէ խորան, ու կը համբուրէ Սրբութեան ու Վկայարանի մարմարները, մինչ անդին պաշտամունքի աննման երգեր բռնած են ամբողջ տաճարը:

Ուխտաւորի վերջին այցելութիւնս եղաւ տաճարին՝ որ Տիրամօր է նուիրուած, ամէնէն հինն և ամէնէն մեծը բոլոր աշխարհիս մէջ: Հոյակապ ու վսեմ արտաքինին համեմատ՝ ոսկիով, արծաթով և արուեստի չքնաղ կոթողներով կը փայլի ներսը. և այդ ամէնը ցայտուն ապացոյց քրիստոնեայ Հոռոմի «հաւատքին որ պատմուած է ամբողջ աշխարհի մէջ»:

Տիրամօր անոյշ հայեացքին և Յիսուսի

օրրանին համբոյրիս ներշնչումով դուրս կ'ելլեմ տաճարէն: Ուխտս կատարած եմ:

Բայց դեռ անբաւ հնութիւն կայ եւ համբուրելի սրբութիւններ: Ամբողջ օր մը կը դեգերիմ քաղաքէն դուրս՝ պատմական գետնադամբաններուն մէջ, ուր կարծես կը վերապրի նախկին քրիստոնեայ կեանքը, աղօթքներով, երգերով ու պատարագի զոհով որ այդ մութ քաղքին մէջ տեղի կ'ունենայ աղօտ լապտերներու և մոմերու լոյսով. ամէն ինչ նոյնն է, նոյն հաւատքը և նոյն խորհուրդները. բաց ի հիներու սըրտատրոփ սպասումէն վաղորդայնին՝ որ կը ծագէր կարմիր արեւով Հոռոմի կրկէսներուն վրայ:

Վերադարձիս աչքիս կը զարնէ անոնց մէ մին՝ դեռ կանգուն, կիսաւեր Կոլոսէոնը, որուն մէջ նորէն աղօթք կայ ուխտաւորներու՝ որոնք մարտիրոսներու հետքերը կը համբուրեն և անոնց յուշերով կը խանդավառուին:

Պալատինի, Ֆորումի քով զմայլանքով կը տեսնեմ օրէ օր հին փառքերու վերածնութիւնը Մուսոլինիի կամքով: Իսկ Վատիկանեան թանգարանները հելլէն և լատին գեղարուեստի հազուագիւտ նմոյշներով՝ հիացումով կը ճնշեն հոգիս:

Յաւիտենական քաղաքը լքելէս առաջ բախտը կ'ունենամ տեսնելու և համբուրելու աջը Անոր՝ զոր 400 միլիոն հաւատացեալ՝ ամէն ազգէ և ամէն աշխարհէ՝ իրենց պաշտած Քրիստոսի փոխանորդ կը դաւանին:

Ի զուր կը փորձեմ արձանագրել յուզումը ամբոխին որ ծնրադիր կը համբուրէ աջը Ս. Պապին՝ որ կու գայ օրհնութեամբ ու կ'անցնի կ'աներեւութանայ տեսիլքի մը պէս ովսանաներու և օրհնութեանց մէջէն:

ՈՒՍՏԱՒՈՐ